

PRESS RELEASE

Սեպտեմբերի 27, 2016

Կեսայտարարվեն Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեքի մրցանակակիրները

Տեղեկատվության ազատության “Ոսկե բանալի և Ժանգոտ կողպեք” ամենամյա մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2016 թվականի սեպտեմբերի 28-ին, Երևանում, Ռեժիսե հյուրանոցում: Միջոցառումը նվիրված է Տեղեկատվության ազատության միջազգային օրվան և ԻԱԿ-ի 15 ամյակին: Կշնորվեն մրցանակաբաշխության դրական մրցանակը՝ Ոսկե բանալին՝ որպես բաց և հրապարակային աշխատանքի խորհրդանիշ և մրցանակաբաշխության բացասական խորհրդանիշը՝ Ժանգոտ կողպեքը, որպես փակ աշխատանքի խորհրդանիշ: Մրցանակակիրներին որոշում է տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, լրագրողներից, ոլորտի փորձագետներից կազմված անկախ ժյուրին: Ժյուրիի անդամներն ամփոփում են իրենց և ԻԱԿ-ի մոնիտորինգների արդյունքները, քննարկում են նաև կենտրոնի եռամսյակային Սև ցուցակները, որում ընդգրկվում են տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաներն ու գերատեսչությունները: Հրապարակային և փակ գերատեսչությունների ընտրության չափանիշներին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <http://www.foi.am/hy/award-standards/>: Նախորդ տարիների մրցանակակիրների մասին տեղեկությունները հասանելի են այստեղ՝ <http://www.foi.am/hy/awards-winners/>:

2002 թ.-ից վեր աշխարհի ավելի քան 100 երկրներում սեպտեմբերի 28-ը նշվում է որպես ՏԱ միջազգային օր: 2003 թ.-ից ի վեր «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո ԻԱԿ-ը գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնել է ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն՝ գնահատելու համար հրապարակային և բաց աշխատանքը, և քննադատելու փակ և գաղտնի աշխատանքը:

ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությունը կազմակերպվել է ԻԱԿ-ի կողմից Իրավաբանների հայկական ասոցիացիայի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ “Կոուլցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում” ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից՝ գործընկեր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2014թ.-ի հունվարից, կավարտվի 2016թ.-ի դեկտեմբերին: Բյուջեն կազմում է 650.000 եվրո:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽՍԲԱԳԻՐՆԵՐԻՆ.

Լրագրողների մուտքն ազատ է:

Իրավաբանների հայկական ասոցիացիան հիմնադրվել է 1995թ.-ին: Առաքելությունն է նպաստել Հայաստանում օրենքի գերակայության և ժողովրդավարության հաստատմանը և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, ուր մարդիկ իրազեկ են իրենց իրավունքներին և իրենց իրավունքները պաշտպանված են:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի՝ 2001թ.-ից: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապվել՝ Լիանա Դոյոյան - ԻԱԿ նախագահ, Ծրագրի ղեկավարի տեղակալ, ենթադրամաշնորհների համակարգող:

Աշխատանքային օրերին՝ 9:00 – 18:00, 560-360 հեռախոսահամարով

Էլ. փոստ՝ foi@foi.am

Website: www.foi.am



Իրավաբանների հայկական ասոցիացիա
Հասցե: ՀՀ, Երևան 0010,
Նալբանդյան 7, բն 2
Հեռ.՝ +37410 54 01 99
Ֆաքս. +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ ՀՀ, Երևան 0010
Բուզանդի 1/3
Հեռ.՝ +37410 56 03 60
Ֆաքս +37410 56 03 60

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Հայաստանում ԵՄ պատվիրակություն
Հեռ.՝ +37410 54 64 94
Ֆաքս. +37410 54 64 95

Եվրոպական հանձնաժողովը ԵՄ-ի գործադիր մարմինն է:

“The European Union is made up of 28 Member States who have decided to gradually link together their know-how, resources and destinies. Together, during a period of enlargement of 50 years, they have built a zone of stability, democracy and sustainable development whilst maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The European Union is committed to sharing its achievements and its values with countries and peoples beyond its borders”.